



ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

CHORALSPACE

ՋՄԵՌԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Դեկտեմբերի 9 - 19, 2021
Բեռլին, Գերմանիա



ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ԵՆ ԵՐԳՉԱԽՄԲԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԿՈՂՄԵՐԻՑ ԲԵՌԼԻՆԻ ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

CHORALSPACE Ձմեռային Փառատոնը նորարարական իրադարձություն է, որը ցուցադրում է իր աջակցությունը միջազգային երգչախմբային բարեկամությանը: Սպասվում են տեղի և արտերկրի երգչախմբերի սեզոնային համերգներ՝ Բեռլինի ամենագեղեցիկ ձմեռային վայրերում:

Դեկտեմբերը բացառիկ ամիս է Բեռլինի երգչախմբային համայնքի համար: Յուրաքանչյուր օր լի է հարյուրավոր համերգներով՝ իրենց բազմազան և ինքնատիպ երգացանկով: Մենք հրավիրում ենք աշխարհի տարբեր երկրներից երգչախմբերի՝ Բեռլինի գունագեղ երգչախմբային համայնքին միանալու և երաժշտության տոնակատարության անմոռանալի պահերը միասին վայելելու համար:

Ծրագիրը ստեղծվել է այս առանձնահատուկ շաբաթների ընթացքում Բեռլին այցելող արտերկրի երգչախմբերի համար՝ անհատապես բավարարելու շրջիկ համույթների սպասելիքները և ցուցադրելու նրանց երգեցողության ավանդույթները: Նախատեսված են փորձեր, համերգներ և ներկայացումներ քաղաքի լավագույն ամանորյա բեմերում:



**ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ՈՒ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑ**

CHORALSPACE Ձմեռային Փառատոնի գերխնդիր տարրը «Երգչախմբային Կլաստեր»-ն է, որը երեք համույթներից բաղկացած համատեղ խումբ է, որոնք միասին աշխատում են՝ մշակելու իրենց փառատոնի մասնակցության ծրագիրը:

Փառատոնի թիմը կաշխատի յուրաքանչյուր շահագրգիռ երգչախմբի հետ՝ գտնելու և ստեղծելու անսամբլի սպասումը, բնավորությունը և երգացանկը բավարարող կլաստերը: Փառատոնի գեղարվեստական ղեկավարը պլանավորելու է յուրաքանչյուր կլաստերի առցանց աշխատանքային նստաշրջաններ և ղեկավարելու է նրանց հանդիպումները:

Աշխատանքային նստաշրջանները նվիրված են համույթների միմյանց ներկայացմանը և փառատոնին մասնակցության ծրագրի ստեղծմանը: Համատեղ փորձերը և ներկայացումների նախապատրաստման գործընթացը նույնպես աշխատանքային նստաշրջանների մի մասն են: Այս համագործակցային գործընթացը առավելագույնի է հասցնելու ներգրավվածությունը բոլոր երգիչների համար:



ԹԻՄԹԻ ՈՒԵՅՆ-ՌԱՅԹ
CHORALSPACE
ՁՄԵՌԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Թիմթի Ուեյն-Ռայթը տասը տարի շարունակ աշխատում էր The King's Singers-ում, շրջագայելով և երգելով աշխարհի ավելի քան 1500 համերգներին աշխարհի ամենամեծ բեմերում:

Թիմթին դասավանդել է ավելի քան 500 վարպետության դասերին, սեմինարներին և ամառային դպրոցներում՝ համույթի հմտություններ և տեխնիկա փոխանցելով վոկալ համույթներին ամբողջ աշխարհում: King's Singers-ի հետ երգելու տարիներին խումբն արժանացել է Grammy մրցանակի, դասվել Grammy-ի հաջորդ անվանակարգերում և ներառված են Gramophone-ի փառքի սրահում:

Թիմթին ղեկավարելու է Երգչախմբային Կլաստերի աշխատանքային գործընթացը և օգնելու է մասնակից երգչախմբերին համակարգել իրենց կատարումները CHORALSPACE 2021 Ձմեռային Փառատոնի համար:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ



Արվին Թան

Novo Concertante Manila- ի Հիմնադիր և Երգչախմբի վարպետ Ֆիլիպինների համալսարանի(UP) Երաժշտագիտության պրոֆեսոր



Հանս - Հեռման Ռեհբեոգ

Rundfunkchor Berlin-ի Գործադիր Տնօրեն Ռոստոկի Երաժշտության և թատրոնի համալսարանի Երաժշտության կառավարման և կարիերայի պլանավորման դասախոս



Ելենա Շառկովա

Սիլիկոնային հովտի սիմֆոնիկ երգչախմբի Երաժշտական Տնօրեն Սիլիկոնային հովտի Կանտաբիլե Երիտասարդ երգիչների գեղարվեստական ղեկավար



Սուսաննա Սոու

Երիտասարդական Երգչախմբային Ակադեմիայի Տնօրեն, Կուալա Լումպուր, Մալայզիայի համալսարանի Երգչախմբային Գործունեության Տնօրեն Միջազգային Kodály Միության Փոխնախագահ



Շտեֆան Զինոն

Դեթմոլդի Երաժշտության համալսարանի Կարիերայի Կենտրոնի Տնօրեն Երաժշտության կառավարման դասախոս



Թոմաս Շույլ

Ֆիլիպինների Կազայան Համալսարանի Երաժշտության կառավարման և Երաժշտագիտության պրոֆեսոր



Վիրջինիա Բոնո

Estudio Coral Meridies Հիմնադիր և Գեղարվեստական ղեկավար, Միջազգային ճանաչում ունեցող հյուր դիրիժոր, ժյուրիի անդամ և վարպետաց դասերի ղեկավար

CHORALSPACE ԹԻՄ



Գենտ Լազրի

Նախագծի Հիմնադիր և Ղեկավար



Քրիստինե Շերոյան

Անդամակցության Գործառնությունների Ղեկավար



Միգել Սանտոս Կաստրո

CHORALSPACE Ակադեմիայի Ծրագրերի Տնօրեն



Թիմթի Ուեյն-Ռայթ

Ձմեռային Փառատոնի Գեղարվեստական Ղեկավար



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՓԱՌԱՏՈՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՎՈՒՄ Է Ց ԱՌՑԱՆՑ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐՈՎ

1. Ներածական ժողով խորհրդի կազմի և դիրիժորների հետ՝ երգչախմբերի նպատակների և սպասումների մասին խոսելու համար:
2. Դիրիժորների և Երգչախմբերի ներկայացման ժողով՝ իրենց աշխատանքը նկարագրելու և իրենց մասնակցության առաքելությունը մանրամասնելու համար:
3. Դիրիժորների երգացանկի ժողով՝ համատեղ ելույթների ստեղծագործությունների վերաբերյալ ծրագրերն ու առաջարկները ներկայացնելու համար:
4. Երգիչների և դիրիժորների ներգրավվածության ժողով՝ կիսելու համար իրենց երկրների երաժշտա - մշակութային ավանդույթների և փառատոնին նրանց երգացանկի վերաբերյալ պատկերացումները:
5. & 6. Կլաստերի բոլոր երգչախմբերի I և II համատեղ փորձը՝ իրենց համատեղ ելույթի ծրագիրը ներկայացնելու և փորձելու համար:
7. Փառատոնից առաջ վերջին հանդիպումը բոլոր ներգրավվածների հետ՝ փառատոնի ժամանակացույցը ներկայացնելու և վերջին թարմացումները կիսելու համար:
8. Ամփոփիչ հանդիպում բոլոր ներգրավվածների հետ՝ հուշերով և ծրագրերով կիսվելու համար:



ՓԱՌԱՏՈՆԱՅԻՆ ՕՐԵՐԻ ՃԿՈՒՆ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ

Մասնակից խմբերից շատ քչերը կարող են ցանկանալ մնալ
փառատոնի ողջ 10 օրվա ընթացքում:

Համույթների մեծ մասը 4-ից 5 օր կմնա Բեռլինում:

Հաջորդ ամփոփագիրը նկարագրում է 5 օրվա ընդհանուր
ժամանակացույցը:

Երգչախմբերի յուրաքանչյուր կլաստերի համար կմշակվեն
անհատական ծրագրեր:

ՕՐ 1.

Ժամանում Բեռլին

ՕՐ 2.

Առավոտյան՝ առաջին փորձ

Կեսօրին՝ ուղեկցվող շրջայց քաղաքում

Երեկոն ազատ է

ՕՐ 3.

Առավոտյան՝ երկրորդ փորձ

Կեսօրին՝ ակուստիկ և բեմական փորձ

Երեկոյան՝ համերգ

ՕՐ 4.

Առավոտյան՝ ակուստիկ և բեմական փորձ

Կեսօրին՝ համերգ

Երեկոյան՝ ընթրիք բոլոր մասնակիցների համար.

Երաժշտությամբ, երգեցողությամբ ու պարով

ՕՐ 5.

Մեկնում



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐԻ ԱԿՆԱՐԿ՝ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

CHORALSPACE Ձմեռային Փառատոնի մասնակցության վճարը մեկ անձի համար 119 եվրո է: Այս վճարը վերաբերում է բոլոր գործող մասնակիցներին:

Մասնակցության վճարը ներառում է.

Աշխատանքային գործընթացի բոլոր նստաշրջանները, անհատական ելույթների մասնագիտական, գեղարվեստական, տեխնիկական և կազմակերպչական պայմանավորվածություններ՝ ներառյալ անձնակազմ, ծրագրերի գիրք, հրապարակայնություն և հանդիսատեսի կազմակերպում, թռուցիկներ, պաստառներ, մամուլի հաղորդագրություններ, բեմի կառավարման և անվտանգության անցաթղթեր, ինչպես նաև՝ փառատոնային օրերի ձեր մնալու դեպքում այլ համերգների մուտք (տեղերը՝ ըստ հնարավորության), և փառատոնի անձնակազմի աջակցություն: Բացի այդ, բոլոր հյուր - երգչախմբերի համար ներառված է զբոսավարի հետ զբոսանք Բեռլինում:

Մասնակցության վճարը չի ներառում.

Ճանապարհորդություն, կեցություն և սնունդ:

Փոխկապակցված անձանց (ուղեկցող անձինք, ընտանիքներ, ընկերներ և գործընկերներ) առաջարկվում է մասնակցության իջեցված վճար՝ 49 եվրո մեկ անձի համար, որը ներառում է մուտքը նրանց հետ կապված բոլոր երգչախմբերի փորձերին և համերգներին:



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ՈՒ ՉԵՂԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մասնակցության վճարի 20% -ը հաշվեգրվում է գրանցման նախնական հաստատման հետ միասին՝ ամենաուշը գրանցվելուց մեկ շաբաթ անց:
80%-ը հաշիվ-ապրանքագրվելու է միջոցառման մեկնարկի օրվանից 6 ամիս անց:

Բոլոր վճարումները մարվում են հաշիվը գանձելուց ամենաուշը 14 օր հետո:

100% վերադարձվում է յուրաքանչյուր 20-րդ հոգու դեպքում 1 չեղարկման համար:
80% հետ է վերադարձվում չեղարկումների համար մինչև օգոստոսի 9-ը, 2021թ.
50% հետ է վերադարձվում չեղարկումների համար մինչև հոկտեմբերի 9-ը, 2021թ.
20% հետ է վերադարձվում չեղարկումների համար մինչև նոյեմբերի 25-ը, 2021թ.
Չեղարկումների վերադարձը հնարավոր չէ 2021թ.-ի նոյեմբերի 25-ից:

CHORALSPACE

LEARN
CREATE
PERFORM

CHORALSPACE Զմեռային Փառատոն 2021 կազմակերպիչ՝

CHORALSPACE 2021 gemeinnützige GmbH

Parkviertelallee 53, 14089 Berlin, Germany

Հեռ.՝ +49-30-509316370

email: cs@choralspace.org

web: www.choralspace.org

CHORALSPACE շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել է՝ նպատակ ունենալով ներկայացնել աշխարհի լավագույն երգչախմբերի: Կազմակերպության ծրագիրը ներառում է մի շարք համերգներ, սեմինարներ և ստեղծագործական դասընթացներ երգչախմբային ամենահայտնի փորձագետների և աշխարհահռչակ համույթների հետ:



CHORALSPACE



ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՔ ԿԱՊՆՎԵԼ՝

cs@choralspace.org
Հեռ.՝ +49 30 509316370
www.choralspace.org